Funded by the European Union

EU4Dialogue: Կրթության և մշակույթի միջոցով հարաբերությունների բարելավում հակամարտող տարածաշրջանների միջև:



Իրականացման ժամանակահատված: 07.05.2021 - 06.05.2025

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 2 999 254

Ընդհանուր բյուջե: € 3 643 105

Իրականացնող կազմակերպություն(ներ):

DAAD

Նախագծի նկարագրություն:

EU4Dialogue բազմաբաղադրիչ նախագիծը աջակցում է այն նախաձեռնություններին, որոնք նպաստում են Հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում հակամարտող կողմերի միջև երկխոսության մթնոլորտի և մարդկանց միջև շփումների ձևավորմանը:

Այս նախագծի նպատակն է բարելավել հարաբերությունները կրթության և մշակույթի միջոցով: Կոնսորցիումի գործընկեր յոթ կազմակերպություններ Բելգիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Իռլանդիայից, Լատվիայից և Լեհաստանից DAAD-ի հետ մեկտեղ իրականացնում են մի շարք կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ՝ ընդհանուր չորս աշխատանքային փաթեթներով:

Դպրոցների, բարձրագույն կրթության և մշակույթի ոլորտներում նախատեսված միջոցառումները ներառում են ուսումնական ճամփորդություններ դպրոցականների և ուսանողների համար դեպի ԵՄ երկրներ, առցանց լեզվի դասընթացներ ուսուցիչների համար, ամառային դպրոցներ, հյուրերի դասախոսություններ, արվեստի բնագավառի նախագծեր, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ մշակույթի կառավարման, մանկավարժության, մշակութային ժառանգության, թատրոնի և կինոյի ոլորտներում:

Ակնկալվող արդյունքներ:

- ԵՄ-ի ընդլայնված դերը հակամարտող կողմերի միջև երկխոսության խթանման հարցում:

- Ավելի ակտիվ երիտասարդություն և բարելավված միջնակարգ կրթություն հակամարտություններից տուժած շրջաններում:

- Բարձրագույն կրթության միջոցով թիրախային տարածաշրջանների, ինչպես նաև տարածաշրջանի և ԵՄ-ի միջև բարելավված երկխոսություն:

- Մշակութային ժառանգություն հանդիսացող վայրերի օգտագործում վստահության ամրապնդման միջոցառումների համար:

- Մարդկանց միջև ընդլայնված շփումների միջոցով հակամարտ կողմերի բարելավված երկխոսություն: